Գուրգեն Մահարի

Արագիլներ եկան ու գնացին

Արագիլներ եկան ու գնացին,
Եւ գարուններ անցան, դարձան նորից,
Հասակդ ձգւեց, որպէս հացի,
Շուրթերդ կարմիր, կարմիր մորի:

Գնացքը սողաց մթին ձորից,
Ինձ էլ վերցրեց, ճչաց, գնաց .
Իմ աչքը մնաց կանաչ շորիդ
Եւ քո մազերին ոսկետրցակ:

Ախ, իմ դաշտերը լայն ու արձակ,
Եւ մեր խրճիթը, կալը, դղզը
Երազի նման եկան, անցան,
Սպիտակ իմ գառ, թողի քե՛զ էլ…

Եւ օրօրում էր իմ սիրտը թոյլ
Անուշ շըշիւնը հեռու արտի,
Ու գլխիս վրայ խշշում էր խուլ
Դաշտերում թողած ճերմա՛կ բարտին:

«Մրգահաս», 1926